

լով, ընտրութիւնները կ'արգիւէին, յաճախ ան-
յաջող գուշակութիւններ մէջ բերելով: Այս
գիտարութիւնն վերցնելու համար, առանց կրօն-
քին դպչելու, 282 տարւոյն, Պոլսի մէջ Վերսալ
Տրիբունը վճռել տուաւ, իրեն անսունը կրող,
Պոլսի օրէնքի մը միջոցաւ, որ Տրիբունը ըստ
«Կոնստանտինոպոլսի» մէջ պիտոր ընտրութիւն,
որոնք գուշակ-
ներուն արարողութեանց ենթակայ չեն, որովհետեւ
անոնց նախագահ նստող ատենակալները չունին
այն մասնաւոր ձիրքը որ դից կամքը հարցնեն: Ա-
մէն տարի, Դեկտեմբերի Իգոսաց չորսին, նոր
Տրիբուններ կ'ընտրեն, որոնք նոյն ամսուն տաս-
նին իրենց պաշտօնը կը սկսին կատարել: Պաշտօ-
նի մէջ եղող Տրիբուններէն մէկը վիճակով կ'որո-
շուի, այս ժողովքիս նախագահ նստելու: Ատեն-
մը, երբ օրը բաւելու չըլլար այս գործողութիւնն
լնցնելու, անոնք որ արդէն ընտրուած կ'ըլլային՝
իրաւունք ունէին իրենց իրենցմէ ընկերներ ընտ-
րելու, մինչեւ լրանար այն թիւն որ օրէնքը կ'որո-
շէ: Այս կերպ ընտրութիւնը ընթացիկօրէն կ'ը-
սուէր: 305 տարւոյն Տրիբուն օրէնքով մը վճռե-
ցաւ ըստ ցեղից քուէարկութեամբ որոշելու այս
տասնից թիւը:

Թէպէտ և ի սկզբան տրիբուններու իշխանու-
թիւնը շատ հեռի էր այն զօրութենէն որ յետոյ
ստացաւ, սակայն իրմով հռոմէական կառավա-
րութեան բնութիւնը շատ փոփոխութիւններ կը
րեց: Ամէն դասուց իշխանութիւնն, նոյն իսկ ա-
տենակալացն ալ խախտեցաւ: Տրիբունը այնչափ
աւելի զօրացան՝ որչափ աւելի արգելք ըլլաւ Ի-
րաւունքն ունենալով, քան թէ իրենց իրենցմէ գոր-
ծելու, անկարելի էր որոշել այն կէտն՝ ուր պիտի
կանկ առնէին: Նոյն այս առջի ատեններէ սկսեալ
ոչ միայն յայտնի կերպով ժողովուրդը պաշտպա-
նել սկսան, ամէն օրինաւոր իշխանութեան դէմ,
այլ նաև ծերակուտին, և որ և իցէ աստիճանի ատե-
նակալաց որոշմունքները մերժել, և մէկ խօսքով
ոչնչացնել, դատաստանական վճիռները խափա-
նել, զինուորագրութիւնները, հարկատուութիւն
ները, և նաև Ալեքսանդր որոշմանցը դէմ գնել. իսկ
ժողովուրդը ուրախութենէն յիմարեալ կը գովէր
այն դատապարտելի գործողութիւնները որոնք իր-
բև մեծարանք մը կը սեպէր իր զօրութեանը:

Սակայն ամէն բանի ընդգիտման շատ քիչ էր
գեւ. ու մինչև ամէն բանի ձեռք զարնելու յանդի-
նեցան: Այսպէս համարձակեցան հինգ տարուան
միջոց՝ ատենակալաց ընտրութեանը խափան ըլլա-
լու, ամէնէն արժանաւոր քաղաքացիք դատաստա-
նի կանչելու, յաղթանակողը իր յաղթանակին
կապէն վար իջնցնելու, զօրավարներ և նաև հիւ-
պատոսներ՝ բանտարկելու. և վատանուն ընելու
նոյն այն ժողովուրդը զոր պաշտպանել կը ձևացը-
նեն, իր գլխաւորները անպատիւ ընելով. միով
բանիւ, որպէս զի մէկ հայեցումով մը միայն ցու-
ցնեմ քեզի ասոնց իշխանութեան սասակութիւնը,
կայիտս վէտուրիոս անունով հռոմայեցի մը ի
մահ դատապարտեցաւ, ժողովրդեան Տրիբունի
մը ճամբան դադար ժամանակը՝ տեղ չտալուն հա-
մար:

Նաև կրօնքը, այն սանձը զոր դիւր մարդկային
կրից գրին, կրօնքն իսկ Տրիբունից չափազանց իշ-
խանութեանն ալ աւելի ուժ կու տայ. իրենց ան-
ձը նուիրական է, որոնց նաև «Կոնստանտինոպոլսի»
կու տան: Ոչ միայն սրբապաշտութիւն սեպուած է
անոնց անձանց դէմ ինչև իցէ փորձ մը, այլ նաև
ծանր պատուհասներ սպառնացած են անոնց՝ որ
Տրիբունից վրայ խօսելով ինչև իցէ անարգական
խօսք անոնց դէմ զուրցեն: Վերջապէս ինչ ալ
համարձակին զուրցելու, յայտնի օրինաց մը պատ-
ճառաւ՝ ոչ ոք կրնայ անոնց խօսքն ընդհատելու՝
երբ ժողովրդեան առջին կը ճառախօսեն:

Այսպէս վստահ ըլլալով որ բռնութիւնը իրենց
դէմ չգօրեր, և միշտ պաշտպան ունենալով բազ-
մութիւնը, որ անոնց զեղծմունքները իրեն փառք
կը գրէ, այս անձինքս, որոնք և ոչ ատենակալաց
կարգէն կը սեպուին, անպատու հայ զանոնք կը
նախատեն, այնչափ որ նաև օրինաց վրայ ալ իշխե-
լու տատիճանը հասեր են:

Անհետեւ իստուրգի մը միջոցաւ՝ այս ժողո-
վրդեան իրաւանցը պաշտպան հպարտ նեցունքն
ըր, ամբարտաւանութիւնը պարզութեանը հետ
կը միացնեն, ու փառասիրութիւնը չափաւորու-
թեան երևութիւնը կը ծածկեն: Չեն կրնար երբեք
վայելել այն շքեղ պատիւներն՝ որ զարդ են նաև
ամենալնչին ատենակալութեանց. երբոր ճամբան
երթալու կ'ըլլան, առջնուն ստորին պաշտօնեայ
մը միայն կ'երթայ, որ հաւանքով կ'ըսուի, և աւելի
հնազանդութիւն ու վախ կ'ազդէ քան թէ նուի-
րակ մը: Պարզ մէկ խօսքով մը միայն քաղաքացի
մը կ'արգելու ու բանտ կը տանի, առանց ամենեւին
ընդգիտմութիւն մը կրելու. և այս ժողովուրդը որ
այնչափ սնապարծ է իր իրաւանցը վրայ, առանց
բռնութեան տեղիք կու տայ այն իշխանութեանը՝
որ կարծէ թէ նոյն իսկ իրմէն կը բղիւի:

Կը շարունակուի:

1. Մարգուս կիրքը անանկ ճարտասան մ'է, որ միշտ կը համոզէ:
2. Նպատակը տեսնելը դիւրին է, բայց նետը նպատակին հանդիպելը դժար:
3. Հաւատարիմ բարեկամը որ թոյ նման է, որ քովի ծառը չոր ալ ըլլայ՝ սիրով անոր կը պըլ-
լուի:
4. Որուն որ կարողութիւնը հաւասար է իր բաղձանքին, երջանիկ է ան մարդը. և որովհետեւ մարդուս կարողութիւնը քիչ բանի կը հասնի, ա-
նոր համար պէտք է որ չափաւորէ իր բաղձանքը:

1. Գլ. Cooptatie.
2. Պըլուտարք. ի վարս Տիբեր. և Կայ. Գրաք-
ոսի:

1. Լատ. Sacro-Sancti.
2. Լատ. Viator.